ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

(Սեփական հեռագիր)

Էջմիածին, 11 հոկտ. առ. ժ. 10-ին

Եկել են պատգամաւորներ Թիֆլիսից, Բագուից, Ալէքսանդրոպոլից, Շուշուց, Թաւրիզից, Վանից, Արմաւիրից, Մոսկվայից, Բաթումից։

Պատգամաւորները ներկայացան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին. Նրանց անունից ճառ արտասանեց Համբարձում Առաքելեանը։

Շնորհաւորելով եկեղեցական-ազգային ու կուլտուրական մեծ տօնը։ Վեհափառ Կաթողիկոսը շնորհակալութիւն յայտնեց և օրհնեց հայ ժողովուրդը։

Առաքելեանը ներկայացրեց Պօղոս Նուպար-փաշայի յանձնարարական նամակը*)։

Գալիս են հետզհետէ նոր պատգամաւորներ։

Եղանակը հրաշալի է, տրամադրութիւնը տօնական։

Հ. Առաքելեան

*) Այդ նամակը հրատարակում ենք «Մշակի» ներկայ համարում։ Խմբ.

Այսօր շաբաթ, ամսոյ 12-ին, առաւօտեան ժամը 8-ին Վեհափառ Կաթողիկոսի գլխաւորութեամբ և ամբողջ միաբանութեան ու պատգամաւորութիւնների ուղեկցութեամբ տեղի կունենայ հանդիսաւոր երթ Էջմիածնից դէպի Օշական, ուր ս. Մեսրոպի գերեզմանի վրա պատարագ կը մատուցվի. ապա տեղի կունենայ հոգեհանդիստ՝ հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին, ինչպէս և պատգամաւորների բանախօսութիւններ և ուղերձների ընթերցում։

—

Այսօր առ. ժամը 10-ից կը սկսվի Վանքի մայր-եկեղեցում հանդիսաւոր պատարագ, որ կը մատուցանէ Աշոտ եպ. և օրվայ առիթով քարոզ կը խօսի։ Պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանդիստ հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։

Իսկ երեկոյեան ժ. 8-ին Թիֆլիսի ժողովարանում տեղի կունենան տօնին նուիրված ընթերցանութիւն և դասախօսութիւններ։ Խօսելու են տ. Սիրանոյշ, Ն. Աղբալեան, Գ. Իփէկեան, Ստ. Լիսիցեան, Յ. Տէր-Միրաքեան և Փափազեան։ Երաժիշտ Միրզայեանի ղեկավարութեան տակ գտնվող երգեցիկ խումբը երգելու է մէջընդմէջ։